VEOLIA
Ջուր

ՀՈՒԼԻՍ 2024

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ 3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում 3
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում 7
1.3. Ջրահեռացման համակարգ 8
1.4 Կեղտաջրերի մաքրում և հեռացում 9
1.5 Էներգահամակարգ 9

2. Առևտրային տնօրինություն 10
2.1. Բաժանորդների տվյալներ 10
2.2. Հասույթ 11
2.3. Գանձում 12
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ 12
2.5. Ջրաչափեր 13
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում 14

3. Տեխնիկական տնօրինություն 15
3.1. Ջրամատակարարման շարունակականություն 15
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում 16
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ 19
3.4. Ջրատար համակարգի բարելավում 19
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն 20
3.6. 1-85 թեժ գիծ 21

4. Լրատվական ծառայություն 22

5. Որակի, առողջության և անվտանգության բաժին 24
5.1. Դասընթացներ/սեմինարներ 24
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում 26
5.3. Վեոլիա Գրուպի նոր խմբագրության ԲՌԿ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ 26
5.4. Ընկերության հաշվետվության ձևավորման աշխատանքներ 26
5.5. ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ 27
5.6. Քլորի տարողությունների՝ կոնտեյների և բալոնի գազազերծման (դեգազացիայի) փչամաքրման, տեխնիկական վկայագրման և ներկման աշխատանքներ 27
5.7. Բժշկական զննություններ եվ հետազոտություններ 27

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում Վեռլիա Ընկերության սպասարկման տարածքում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝

Գյուղ Հացիկ

Շիրակ ՇՏ-ի աշխատակիցների հետ համատեղ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ Ախուրյանի ջրագծին զուգահեռ անցնող D-500մմ պողպատե, խցափակված ջրագծից առկա է ջրի արտահոսք: Վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Հացիկ կայարան ավանի մոտ, Ախուրյանի գործող և շահագործումից հանված ջրագծերի միջև հայտնաբերվեց փոխմիացում: Կատարվեց խցափակում, թողնելով միայն Հացիկ կայարան ավանը սնուցող ջրագիծը: Արդյունքում տնտեսվեց Q=1,3 լ/վ ջրաքանակ:

Քաղաք Արտաշատ

Արտաշատ քաղաքը սնող D=400մմ ջրագծի վրա իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար կայարանի մոտ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=20լ/վ ջրաքանակ:





Արևշատ-Լանջազատ ճանապարհին իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Արտաշատ տեղամասի աշխատակիցների հետ հայտնաբերվեց վթար D=400մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=4լ/վ ջրաքանակ:



Քաղաք Արարատ

Արարատ տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվեց վթար Զոդ-Երասխ D=225մմ ՊԷ ջրատարի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 5լ/վ ջրաքանակ:



Քաղաք Մեծամոր



Մեծամոր քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում թիվ 3 մանկապարտեզի մոտ հայտնաբերվեց գաղտնի վթար D=50մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=4լ/վ ջրաքանակ:

Մեծամոր քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 1-ին թաղամաս 27 շենքի դիմաց հայտնաբերվեց թվով 3 գաղտնի վթար D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=4,5լ/վ ջրաքանակ:







Մեծամոր քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 1-ին թաղամաս 2-րդ շենքի մոտ հայտնաբերվեց գաղտնի վթար D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=4լ/վ ջրաքանակ:

Քաղաք Երևան

Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Տիչինա 2/1 հասցեի հարևանությամբ անցնող D = 200մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=5լ/վ ջրաքանակ:



■ Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ Մալաթիա փողոցում իրականացված վթարարդոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց թվով 3 գաղտնի վթար համապատասխանաբար D=32մմ, D=25մմ և D=32մմ պողպատե ջրագծերի վրա: Վթարները վերացնելուց հետո տնտեսվեց ընդհանուր Q=9լ/վ ջրաքանակ:



■ Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց թվով 2 վթար Անտառային 19ա, հասցեի հարևանությամբ D=63մմ ՊԷ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=10լ/վ ջրաքանակ:

■ Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Գուլակյան 41/2 հասցեի հարևանությամբ D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=4լ/վ ջրաքանակ:

■ Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց թվով 3 գաղտնի վթար Գյուլբենկյան 38 շենքի հարևանությամբ, D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարները վերացնելուց հետո տնտեսվեց ընդհանուր Q=4լ/վ ջրաքանակ:

■ Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Վաղարշյան 8/1 շենքի հարևանությամբ, D=300մմ պողպատե ջրագծի վրա: Վթարները վերացնելուց հետո տնտեսվեց ընդհանուր Q=4լ/վ ջրաքանակ:




■ Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Խորենացի 221/3 շենքի հարևանությամբ, D=50մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=4լ/վ ջրաքանակ:

■ Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Բրյուսով 165 շենքի մոտ, Բրյուսով 165 պկ ելքի, D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 5լ/վ ջրաքանակ:



Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Արզումանյան 7 շենքի բակում, դիտահորի մեջ, D=50մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=6լ/վ ջրաքանակ:

Գեղարքունիքի մարզ

«Մարտունի» տեղամասի աշխատակիցների կողմից սեփական ուժերով, ինչպես նաև 2024 ՊԿԱԾ շրջանակներում ք. Մարտունի, Գետափնյա փողոցում և Գետափնյա փողոցի նրբանցքներում և փակուղիներում իրականացվել են ջրագծերի վերակառուցման աշխատանքներ: Վերակառուցվել են d=25-160մմ, L=973գծմ ջրագծեր, տեղադրվել է թվով 40 ջրաչափական դիտահոր, թվով 40 d=20մմ բրոնզե փական, սահմանազատման կետերում և նոր տեղադրված ջրաչափական դիտահորերում տեղադրվել և վերատեղադրվել է թվով 40 ջրաչափ, շահագործումից հանվել են d=100-250մմ L=1450գծմ վթարային վիճակում գտնվող մետաղական ջրագծերը:

Կատարված աշխատանքների արդյունքում ք.Մարտունի, Գետափնյա փողոցում և Գետափնյա փողոցի նրբանցքներում և փակուղիներում բարելավվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, մատակարարվող խմելու ջրի որակը, տնտեսվել է մոտ 4,5 լ/վրկ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում:

Արարատի մարզ

«Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից սեփական ուժերով, ինչպես նաև 2024 ՊԿԱԾ շրջանակներում Արարատի մարզի գ.Դալար Գրիբաեդով, գ.Այգեստան Զ.Մարգարյան, ք.Արտաշատ, Հ.Այվազովսկու, գ.Բերքանուշ Ղ.Աղայան, գ. Բյուրավան Ն.Ստեփանյան փողոցներում իրականացվել են ջրագծերի վերակառուցման աշխատանքներ: Վերակառուցվել են d=20-110մմ, L=1460մ ջրագծեր, տեղադրվել է թվով 11 ջրաչափական դիտահոր և թվով 11 d=15մմ փական, շահագործումից հանվել են d=20-110մմ L=1450գծմ վթարային վիճակում գտնվող մետաղական ջրագծերը:



Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, մատակարարվող խմելու ջրի որակը, տնտեսվել է մոտ 4,5 լ/վրկ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում:

Ջրահեռացման համակարգ

«Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից Նոր Նորք 3-րդ զանգված, Գյուրջյան փողոց 5 հասցեում կառուցվել է d=200մմ L=28գծ/մ երկարությամբ կոյուղագիծ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով: Կառուցվել է թվով 1 դիտահոր:

Հուլիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1064
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	24558
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	29403
Հոսակորուստի որոնում կորելյատորով	մ	1860
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3221.5
Կառուցված ջրագիծ	մ	7317.4
Կառուցված կոյուղագիծ	մ	646
Վերացված գաղտնի վթարներ	հատ	13
Փոխարինված փական	հատ	696
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	421
Մաքրված դիտահոր	հատ	2485
Գաղտնի վթաների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	31
Վերացված վթարներ	*Չափման միավոր*	*Քանակ*
Ջրամատակարարման ցանցում	հատ	1200
Ջրահեռացման ցանցում	հատ	1596
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Հուլիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1285	837	1634

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հուլիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										
	15	20	25	30	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	241	0	0	0	1	0	0	0	0	0	242
Փոխարինված	314	9	8	0	5	3	4	2	1	0	346
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	287	10	2	0	1	2	1	0	0	0	303
Ընդամենը	842	19	10	0	7	5	5	2	1	0	891

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 891 ջրաչափ: Կատարված աշխատանքների 95%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հուլիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	0	229	36
2	Քանաքեռ-Զեյթուն	20	227	0
3	Մաշտոց	0	212	290
4	Շահումյան	0	186	0
5	Շիրակ	1818	477	15
6	Արթիկ	0	123	0
7	Ապարան	0	73	0
8	Ալավերդի	2300	36	48
9	Աշոցք	40	5	0
10	Բերդ	315	23	0
11	Իջևան	0	66	72
12	Լոռի	0	283	24
13	Նոյեմբերյան	120	17	0
14	Սպիտակ	0	25	0
15	Ստեփանավան	2900	41	0
16	Թալին	0	25	0
17	Տաշիր	0	12	0
18	Չարենցավան	0	120	0
19	Աբովյան	0	126	0
20	Հրազդան	0	95	300
21	Կենտրոն	340	204	0
22	Հյուսիս	130	239	59
23	Հարավ	0	289	0
24	Էրեբունի	70	151	12
25	Արմավիր	0	119	0
26	Արտաշատ	0	128	240
27	Էջմիածին	0	161	0
28	Աշտարակ	970	45	50
29	Արարատ	0	70	6
30	Մասիս	0	54	0
31	Գավառ	690	29	6
32	Սևան	2170	90	28
33	Մարտունի	0	44	12
34	Վարդենիս	210	5	19
35	Ճամբարակ	0	31	0
36	Դիլիջան	60	72	22
37	Վայք	245	20	0
38	Եղեգնաձոր	0	18	0
39	Ջերմուկ	0	42	0
40	Սիսիան	0	28	0
41	Գորիս	0	60	6
42	Կապան	1147	87	22
43	Մեղրի	0	41	48
	Ընդամենը	13545	4428	1315

1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանի տիղմ տեղափոխող կոնվեյերը դադարեց աշխատել՝ գերծանրաբեռնվածության պատճառով: Խնդիրը լուծելու համար կոնվեյերը ապամոնտաժվեց, մանրակրկիտ մաքրվեց կուտակված նստվածքից, և վերագործարկվեց: Միաժամանակ, իրականացվեցին նաև այլ վերանորոգման աշխատանքներ. մասնավորապես, փոխարինվեցին օդամուղի ռոտորի թերթիկները և օդի զտիչը:
- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանում առաջացել էին տեխնիկական խնդիրներ, որոնք խոչընդոտում էին դրա բնականոն աշխատանքը: Մասնավորապես, հակադարձ փականների խցանման հետևանքով նվազել էր պոմպերի արտադրողականությունը: Միաժամանակ, ջրի մակարդակի տվիչների անսարքության պատճառով խաթարվել էր պոմպերի ավտոմատ աշխատանքը: Արդյունքում վերացվեցին բոլոր թերությունները, և պոմպակայանը աշխատում է իր բնականոն ռեժիմով:
- Ջերմուկի կեղտաջրերի պոմպակայանում խաթարվել էր պոմպերի աշխատանքը: Պատճառը ֆազի պաշտպանիչ ռելեի անսարքությունն էր: Խնդիրը լուծվեց՝ անսարք ռելեն փոխարինվեց նորով: Այժմ պոմպակայանն աշխատում է իր բնականոն ռեժիմով:



Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	61,078	28.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	101,522	28.8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	130,388	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	65,370	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	0	0
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	19,132	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,952	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	15,300	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	9,600	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	4,690	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 385 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 326 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.08.2024 թվականի դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 625,197 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2024թ. հուլիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	675,567	594,967	88,1
	Իրավաբանական անձ	33,157	30,230	91,2

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 10 մայիսի 2024 թվականի №137-Ն որոշման համաձայն, եթե բաժանորդը մինչև 2024 թվականի հունիսի 20-ը գրավոր չի դիմում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ լուծելու իր հետ կնքված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագիրը, և նույն ամսաթվից շարունակում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններից փաստացի օգտվելը, այդ պայմանագիրը համարվում է փոփոխված, իսկ այն բաժանորդի դեպքում, ով հանդիսացել է նախկին ջրամատակարար կազմակերպությունների բաժանորդ, սակայն «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ դեռևս չի կնքել համապատասխան պայմանագիր, պայմանագիրը համարվում է կնքված սույն որոշմամբ սահմանված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան:
Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	752,102	608,181	80,9
	Իրավաբանական անձ	38,861	28,009	72,1

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:
Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 654 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում անսարք ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակագ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին՝ ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:
Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:
Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հուլիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4972 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 07.2024
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2838	1496	467	4801
	Իրավաբանական անձ	88	69	14	171
	Ընդամենը	2926	1565	481	4972

Ստուգաչափված ջրաչափ



Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հուլիս ամսին փոխարինված 4972 ջրաչափերի մոտ 41 %-ը (կամ 2046 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:
Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:
Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 278,532 մ^3 հասույթ:
Ստորև՝ գրաֆիկական տեսքով, բերված են 2024թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Հուլիս ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,841 մլն. դրամ (100 %):
Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:
Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դադարեցումներ:
Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը:
Հուլիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 181 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 23.2 մլն դրամ ընդհանուր գումարով:
Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում է դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2024թթ. ընթացիկ որոշներ		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
32,860	4,523,713,870	20,203	2,355,109,548	1,095	268,042,644	12,657	2,168,604,322	12,316	1,468,687,565

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 61 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը՝ մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.08.2024թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	12,016	3,032
Բնակիչ-բաժանորդներ	8,375	2,009
Իրավաբանական անձեր	3,641	1,023

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 431.3 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2024 թ.դեբիտորական պարտքերի շարժը / մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.08.2024թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	723,274	607,041	83.93	37,838	27,983	73.95
	Առանց ջրաչափի	28,828	1,140	3.95	1,023	26	2.54

Տվյալների բազայում 01.08.2024թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	894,291	377,062	42.16	41,076	6,558	15.97

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:
Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 5225 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1264 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:
Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2495	2054	81.9
գ.Պառոյան	1728	1139	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	6039	1974	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:
Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 21169, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 19106, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 5083, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5872, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2935, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5312 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 8753 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրազրկում իրականացնելու նպատակով:
Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	441	281,195	53,029,758

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի հուլիս ամսվա շարունակականության տվյալները, որը կազմում է 94.5%, ինչը 1.8%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
0	1											
2022	96.4%	96.5%	97.1%	97.1%	97.0%	96.8%	96.6%	96.9%	97.1%	96.8%	96.7%	96.5%
2023	96.6%	96.5%	96.8%	96.8%	96.7%	96.6%	96.3%	96.3%	96.6%	96.8%	96.7%	96.5%
2024	96.4%	96.3%	96.3%	96.2%	94.9%	94.5%	94.5%					

Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել է թվով 45 ՃԿՓ:
Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը՝







Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2024թ-ի հուլիս ամսին 2023թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 78լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսը նվազել է 397 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
Երևան - ջրարտադ. ա/կ-ներ (հազ.կվտ)- 2023թ.	1046	1068	1217	1293	2243	3775	4961	5120	2924	1398	1209	1161
Երևան - ջրարտադ. ա/կ-ներ (հազ.կվտ)- 2024թ.	1060	1052	1178	1469	1852	4223	4564					
Երևան - ինքնահոս ջրաքանակ (լ/վ)- 2023թ.	5200	5151	5122	5056	4937	4906	4871	4985	5101	5182	5068	5012
Երևան - ինքնահոս ջրաքանակ (լ/վ)- 2024թ.	4950	5003	4935	4914	4836	4783	4949					

3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էնեգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 2233 կՎտ/ժ (0,50%), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 18 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 18 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 11412 կՎտ/ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը՝ կնվազեր 9179 կՎտ/ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
2022	544,944	464,284	504,438	449,351	453,844	451,393	492,966	492,856	453,688	461,341	474,992	508,770
2023	518,813	472,624	531,594	447,638	450,529	448,404	486,562	506,247	462,387	466,606	462,952	516,505
2024	517,370	478,389	491,463	456,513	456,098	461,578	488,977					

Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել են 176 էլ. հաշվիչներ: Ջնջվել է 3 նոր ընդունվող պոմպակայան, «Դալարիկ» և «Կալեր» պոմպակայաններում փոխարինվել են ներքին հաշվառման էլ. հաշվիչները: Լենինգրադյան-Սիսակյան և Բաբաջանյան 3/1 հասցեների հոսքաչափերի համար «ՀԷՑ» ՓԲԸ-ից ձեռք ենք բերել տեխ. պայմաններ: Դիլիջան քաղաքի «Վարչական շենք» հասցեում հայտնաբերված հավելագրումը (4024կՎտ/ժ; 215203.52 ՀՀ դրամ) հանվել է «ՀԷՑ» ՓԲԸ փոխադարձ ակտից: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ:
Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կառավարման ծրագրում կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 45 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 32 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:
Թվով 385 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 326 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում

- Հաշվետու ամսում հինգ հասցեում տեղադրվել է ինվերտորային համակարգ.
- Ֆրունզե 6/1, 6/2 (She-112)
- Նարեկացի 40 (Hy-22)
- Նոր Նորք 5 29/30 շ. (Hy-3)
- Արցախի 8/2 (Er-31)
- Արցախի 10 ա, բ, գ (Er-41)

Ինվերտորային պոմպի տեղադրում

- Հաշվետու ամսում երկու հասցեում տեղադրվել է ինվերտորային պոմպ.
- Նոր Գեղի բանավան (She-82)
- Ծերենցի 5 (She-22)

Տեղադրված ընդհանուր 157 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է -176,954 կՎտ/ժ-ով՝ 23%-ով:



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2022	557,697	417,971	439,483	583,895	590,180	716,673	753,051	710,462	710,026	653,195	535,607	555,886
2023	587,311	581,236	600,020	606,480	667,416	736,633	766,400	790,037	718,759	606,647	572,372	538,134
2024	536,271	530,293	567,631	558,866	556,908	605,872	589,447	0	0	0	0	0

Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

Հաշվետու ժամանակահատվածում 32 խոշոր պոմպակայանում էլ.մատակարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան

2024 թվականի հուլիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 392264 կՎտ/ժամ (7,59%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսը նվազել է 374 523 ԿՎտ/ժ/ամիս կամ 13,06 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է 998 123 ԿՎտ/ժամ 10,41%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ.էներգիան (ներառյալ արևային կայանների արտադրանքը)



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են հուլիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Նախագծերի հիման վրա կատարվել է Իջևան, Սպիտակ, Էջմիածին, Վեդի, Գավառ քաղաքների, Սափերական, Այգեկ, Բաղրամյան, Մրգաշատ, Մյասնիկյան և Թավշուտ գյուղերի ջրագծերի թվայնացում, ուղղում և թարմացում	տեղանքներ	11
Ջրագծերի /1983 մ/ և կոյուղագծերի /123 մ/ թվայնացում և ուղղում	թվայանացում	1
ՀՀ բոլոր 44 քաղաքների կառուցված հիդրավլիկ մոդելների վերաբերյալ ամփոփ հաշվետվության կազմում՝ հայերեն և անգլերեն տարբերակներով	քաղաք	44
Տեխնիկական պայմանների դիմումների վերաբերյալ դիմորդի տարածքի տեղադիրքի թվայնացում, կազմվում է քարտեզ՝ տարածքում առկա կոմունիկացիաներով, որը մուտքագրվում է փաստաթղթաշրջանառություն: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 191 գործի թվայնացում՝ 300 բաժանորդ	բաժանորդ	300
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը կազմում է 2849 կմ	կմ	2854
«ԱՏՀ»-ում առկա մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը կազմում է 9700 կմ	կմ	9718
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը կազմում է 1858 կմ	կմ	1864
«ԱՏՀ»-ում առկա մարզային կոյուղու երկարությունը կազմում է 1866 կմ	կմ	1867
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	1129
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	286
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդ կետերի ուղղում	կետ	1400
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդ կետերի ուղղում	կետ	430
195 տեխնիկական պայմանների թվայնացում	Տեխ. պայման	195

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գառնի-Երևան ջրատարի վրա՝ Նուբարաշենի ձորում հայտնաբերվել է վթար 10լ/վ մեծությամբ, որը վերացվել է ՇՏ աշխատակիցների կողմից:

- Արին-Բերդ-Խարբերդ ջրատարի վրա հայտնաբերվել է վթար 15լ/վ մեծությամբ, որը վերացվել է ՇՏ կողմից:

- Օրեր անց նույն ջրատարի վրա կրկին առաջացել է վթար 50լ/վ մեծությամբ: Վթարը վերացվել է:

- Արզնի 2 ջրատարի վրա «Կարգավորման» բաժնի աշխատակցիների ահազանգից հետո հայտնաբերվեց վթար, որի պատճառով ջուրը քաղաք չէր հասնում: Անմիջապես կատարվեցին ջրատարի ջրազրկման աշխատանքներ և ջրատարը մեկուսացվեց քաղաքին կապող ճյուղից:

Հաշվետու ամսում կատարվել են նաև ջրաքանակների չափումներ և կարգավորումներ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Ջրառ» ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Քաղաք Դիլիջան, Գոլովինո մաքրման կայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով՝ հեղուկ քլորի համակարգի խափանված վակուում կարգավորիչը փոխարինվել է վերանորոգված վակուում կարգավորիչով:

- Քաղաք Թալին, Ծաղկասար քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար՝ հեղուկ քլորի համակարգի հում ջրի տրման շարքից դուրս եկած պոմպը փոխարինվել է նորով:



- Քաղաք Երևան, Ծարավ աղբյուր քլորակայանում հեղուկ քլորի անվտանգության համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով՝ կարգաբերվել է հեղուկ քլորի անվտանգության համակարգի գազդետեկտորը:

- Քաղաք Թալին, Կենտաղբյուր քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով՝ հեղուկ քլորի համակարգի հում ջրի տրման շարքից դուրս եկած պոմպը փոխարինվել է նորով:



- Քաղաք Հրազդան, Մաքրավան քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով՝ հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած ճնշման կարգավորիչը և հետադարձ փականը փոխարինվել են նորով:

- Քաղաք Երևան, Ավան-Առինջ տեղամասում հետագա շահագործման նպատակով՝ վերանորոգվել է պահեստային վակուում կարգավորիչը:

- Քաղաք Գառնի, Օզոնակայան քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի պահեստային տարրայի միացման հնամաշ՝ շարքից դուրս եկած ալլդոս փականը փոխարինվել է նորով:

- Քաղաք Չարենցավան, Ֆանտան քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար հիպոքլորիդի հաբի համակարգի շարքից դուրս եկած դոզավորման պոմպը փոխարինվել է վերանորոգված 60լ/ժ արտադրողականությամբ դոզավորման պոմպով:

3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 44728 հեռախոսազանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 13087 զանգ, որից Երևան քաղաքինը՝ եղել է 10186 զանգ (77.8%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2901 զանգ (22.2%):
- Շահագործման բնույթի զանգերի քանակը կազմել է 31641 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 21479 զանգ (67.9%), իսկ մարզերինը՝ 10162 զանգ (32.1%):



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2022 Հուլիս	2023 Հուլիս	
Առևտրային	Ընդամենը	**11960**	**13087**	9.42%
	Երևան	9037	10186	12.71%
	Մարզեր	2923	2901	-0.75%
Շահագործում	Շահագործում	38758	31641	-18.36%
	Երևան	27718	21479	-22.51%
	Արաբկիր	3662	4753	29.79%
	Քանաքեռ-Զեյթուն	3364	1363	-59.48%
	Մաշտոց	4107	3186	-22.43%
	Շահումյան	4303	2020	-53.06%
	Շենգավիթ	2414	2768	14.66%
	Կենտրոն	2499	2582	3.32%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	3723	2594	-30.33%
	Էրեբունի	3646	2213	-39.30%
	այդ թվում կոյուղու վթար	141	195	38.30%
	այդ թվում դիտահորի խցանում	3620	3869	6.88%
	ՄԱՐԶԵՐ	11040	10162	-7.95%
	Հարավ	6435	6205	-3.57%
	Հյուսիս	4605	3957	-14.07%
	այդ թվում կոյուղու վթար	57	385	575.44%
	այդ թվում դիտահորի խցանում	2420	3183	31.53%
Ընդամենը		**50718**	**44728**	-11.81%

- 2023թ. հունիս ամսվա համեմատ՝ 2024թ հունիս ամսին 6,06%-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 26,08%-ով:
- 2023թ. հունիսի համեմատ՝ 2024թ հունիս ամսին 46%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 63%-ով ավելացել է հայտարարությունների լսումս ավտոմատ ծառայության միջոցով, իսկ 17%-ով նվազել է 5 րոպեից ավել զանգերի քանակը:

Ջրամատակարարման գրաֆիկի բողոքներ

- 2023թ. հուլիսի համեմատ՝ 2024թ. հուլիս ամսին 32,47%-ով նվազել է ջրամատակարարման զանգերի քանակը:
- 2023թ. հուլիսի համեմատ՝ 2024թ. հուլիս ամսին նվազել է հետզանգով սպասարկված զանգերի քանակը 62%-ով:
- 2023թ. հուլիս ամսին կատարվել է 71883 հետզանգ, իսկ հաշվետու ամսվա ընթացքում՝ 27119 հետզանգ:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու՝ հուլիս ամիսը շոգ եղանակով և սպառման պիկով պայմանավորված լարված ժամանակաշրջան հանդիսացավ Հանրային կապերի ծառայության համար: Մի կողմից համակարգում ակտիվորեն շարունակվում էր ջրաշինարարական աշխատանքների լուսաբանումը թե հեռուստաալիքներով, և թե ընկերության կայքէջով և ֆեյսբուքյան էջով, մյուս կողմից տասնյակ զանգեր ու հարցումներ էին ստացվում լրատվամիջոցներից: Դրանցից յուրաքանչյուրին տրվել է սպառիչ պատասխան, որևէ զանգ կամ նամակ ընկերության կողմից անպատասխան չի մնացել: Սակայն լարվածությունը գագաթնակետին հասավ ամսվա կեսին, և ընկերությունը ստիպված եղավ ընդարձակ պարզաբանմամբ հանդես գալ, որտեղ խոսվեց համակարգի մաշվածության, կորուստի նվազեցմանն ուղղված ընկերության աշխատանքների, վթարների ու դրանցով պայմանավորված ջրանջատումների, ջրաղբյուրներում ջրաքանակի նվազման և համակարգի շահագործման ու սպասարկման այլ խնդիրների մասին: Մամուլի հաղորդագրությունն ուղարկվեց 60-ից ավելի լրատվամիջոցների, որը լայն տարածում գտավ առաջատար կայքերում:

Իսկ ընդհանուր առմամբ ամիսը հագեցած էր ջրաշինարարական աշխատանքների մասին պատմող տեսա և ֆոտո նյութերով ու ռեպորտաժներով: 3 ռեպորտաժ հեռարձակվել է «Ֆրի նյուզ» հեռուսատաալիքով, իսկ 1 ռեպորտաժ՝ մարզային «Քյավառ» թիվիյով:

Հուլիսը մեկնարկեցինք լավ լուրով՝ տեղեկացնելով, որ Արմավիրի մարզի Պտղունք և Մուսալեռ բնակավայրերում ամռանն այլևս ջրի խնդիր չի լինի: Հաջորդ լուրն այն էր, որ Ընկերության Պարտադիր կապիտալ աշխատանքների այս տարվա ծրագրով նորացվել են Երևանի Մալաթիա Սեբաստիա և Աջափնյակ վարչական շրջանների մի քանի փողոցների կոյուղագծեր, վերակառուցման փուլում են Շենգավիթ վարչական շրջանի 4 փողոցների կոյուղիներ: Այս աշխատանքների մասին Ֆրի նյուզ հեռուսատաալիքով պատրաստվեց նաև ընդարձակ ռեպորտաժ: Տեղում արված լուսանկարներով ֆեյսբուքյան և կայքէջի միջոցով լուսաբանվեց, որ ընկերությունը ՊԿԱԾ-ով և սեփական միջոցներով վերանորոգում է Գեղարքունիքի մարզի Մարտունի և Վարդենիս քաղաքների ջրագծերը՝ համապատասխանաբար 2 կմ և 7,5 կմ: Այս աշխատանքների մասին ռեպորտաժներ պատրաստվեցին «Ֆրի նյուզ» ու «Քյավառ» թիվիներով:

Ռեպորտաժով, ինչպես նաև լուսանկարներով լուսաբանվեցին Նորք Մարաշ թաղամասում 9,5 կմ ջրագծի վերանորոգման, ինչպես նաև «Արարատյան 1/2» պոմպակայանից դեպի «Նորաբացի» ՕԿՋ ձգվող ջրատարի վթարային հատվածի նորոգման աշխատանքները:

Ամսվա ընթացքում շատ էին վթարների մասին հաղորդագրությունները: Ընկերությունը լավ գիտակցելով, որ ջրամատակարարման կարճաժամկետ ընդհատումն անգամ դժգոհության ալիք է բարձրացնում բաժանորդների շրջանում, մոբիլիզացնելով բոլոր ռեսուրսները արել է հնարավորինս՝ վթարների ժամանակ առանց ջրանջատման աշխատանքներ իրականացնելու համար: Սակայն դա միշտ չէ, որ հնարավոր է՝ հաշվի առնելով թե ինչ վիճակում են նախորդ դարում կառուցված ջրամատակարարման համակարգն ու ենթակառուցվածքների մեծ մասը:

Մեծ արձագանք ստացան ապօրինությունների մասին նյութերը, որտեղ լուսանկարներով, տեսանյութերով ցուցադրվում էր, թե ինչպես ամռան պիկ օրերին ջրագողությունը կարող է ջրամատակարարման խնդիրներ առաջացնել:

Շատենեղելհրապարակումներթափուր հաստիքների, ինչպես նաև վթարային ու պլանային ջրանջատումների մասին հաղորդագրությունները:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ՈԱԱ բաժինը, ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02Լ հրամանի և հրամանին կից կարգի պահանջներով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածի և 254-րդ հոդվածի պահանջներով, Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջներով, Ընկերության Տեխնիկական տնօրինության, Հյուսիս շահագործման, Հարավ շահագործման և Գործառնական տնօրինությունների ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման ծառայության թվով 5 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 3 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.
- «Ամբարձի մեքենայի տեխնիկապես սարքին վիճակի և անվտանգ շահագործման պատասխանատու անձի որակավորման» թեմայով դասընթաց/գիտելիքների ստուգում,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:

- ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ հոդվածի 3-րդ մասի և 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի ԲՈԿ ստանդարտների պահանջները, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 1 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 2 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.

- «Քլորի փոխադրմանը ներկայացվող անվտանգության պահանջներ մասնագիտական որակավորման» թեմայով դասընթաց / գիտելիքների ստուգում,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով դասընթաց:

2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ



5.2. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 8 քլորակայանում, 11 պոմպակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 92 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման՝ մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2024 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



5.3 ՎԵՈԼԻԱ ԳՐՈՒՊԻ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսում իրականացվել են Վեոլիա Գրուպի «Վտանգավոր էներգիայի վերահսկում» նոր խմբագրության Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտի հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ:

5.4 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսում բաժնի կողմից իրականացվել են Ընկերության Մայիս և Հունիս ամիսների հաշվետվությունների ձևավորման աշխատանքներ:

5.5 ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՊՄ-ՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

■ Բաժինը, հաշվի առնելով ինժեներատեխնիկական անձնակազմերի կողմից իրականացվող գործառույթների բնույթը, դրանց կատարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր վտանգները և վերջինիս հետ կապված ռիսկերը, հիմք ընդունելով ՀՀ գործող ստանդարտների և Գրուպի ԲՌԿ Ստանդարտների պահանջները, հաշվետու ամսում, Ընկերության Ջրամատակարարման և Ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովելու նպատակով՝ աշխատակիցներին տրամադրեց եռակցողի արտահագուստ, եռակցողի կոշիկ, եռակցողի ձեռնոց, վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ժամանակ աչքերի պաշտպանության համար նախատեսված պաշտպանիչ ակնոց, անվտանգության լուսաանդրադարձնող ժիլետ, ճանապարհային անվտանգության կոն, ժապավեն, ինչպես նաև իրականացրեց ամառային արտահագուստի և անվտանգության կոշիկի լրացուցիչ կարիքների գնահատման և անհրաժեշտ քանակների ձեռքբերման աշխատանքներ:

5.6 ՔԼՈՐԻ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ԵՎ ԲԱԼՈՆԻ ԳԱԶԱԶԵՐԾՄԱՆ (ԴԵԳԱԶԱՑԻԱՅԻ) ՓՉԱՄԱՔՐՄԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

■ Հաշվետու ժամանակահատվածում, ՈԱԱ բաժինը, ՏՏ Ջրառ ծառայության հետ համատեղ, կազմակերպել է հեղուկ քլորի տարողությունների՝ թվով 10 կոնտեյների և թվով 24 բալոնի տեխնիկական վկայագրման աշխատանքներ, որը իր մեջ ներառում է ստորև ներկայացվող աշխատանքները.

- Քլորի տարողության գազազերծման (դեգազացիա) և փչամաքրման աշխատանքներ,
- Քլորի տարողության արտաքին ակնադիտական զննում,
- Քլորի տարողության ներքին լապարասկոպիկ զննում,
- Քլորի տարողության մետաղի հաստության որոշում,
- Քլորի տարողության մետաղի կարծրության որոշում,
- Քլորի տարողության փորձարկային ճնշումով պնևմատիկ փորձարկում,
- Քլորի տարողության փականային արմատուրների, կցաշուրթերի, սիֆոնների ստուգում,
- Քլորի տարողության կիպության փորձարկում աշխատանքային ճնշման տակ,
- Քլորի տարողության ներկման աշխատանքներ:

5.7 ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

■ ՈԱԱ բաժինը, հաշվետու ամսում առաջնորդվելով ՀՀ կառավարության 27 մարտի 2003 թվականի N 347-Ն և 15-ը հուլիսի 2004 թվականի N1089-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներով, իրականացրեց Ընկերության համապատասխան մասնագիտություն ունեցող աշխատողների առողջական վիճակի դինամիկ հսկողության, մասնագիտական հիվանդությունների կանխարգելման, վարակիչ և մակաբուծային հիվանդությունների տարածման կանխարգելման և հիվանդությունների հայտնաբերման, տարեկան պարտադիր բժշկական զննությունների և լաբորատոր հետազոտությունների նախապատրաստական աշխատանքներ:
Բժշկական զննությունները և հետազոտությունները կիրականացվեցին ըստ նախապես կազմված պլան-ժամանակացույցի:

VEOLIA
Ջուր

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.Երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am